ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

գ. Շիրակամուտ

N°—Ե -03/207

«14» 10. 2019թ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Ներկայացնում եմ Շիրակամուտ համայնքի ղեկավարի թիվ 56-Ա և 57-Ա որոշումները:

Առդիր 2 էջ::

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

✉ Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզ, Շիրակամուտ համայնք

☎ 0255 6-15-01

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

,,09'' հոկտեմբերի 2019 թվականի N56- Ա

Գ.ՆԱՍԼՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Շիրակամուտ համայնքի բնակիչ Գագիկ Նասլյանի դիմումը՝ Շիրակամուտ համայնքի սեփականություն հանդիսացող 06-087-0062-0011 ծածկագրի տակ գտնվող հողամասը ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով գնելու մասին, Շիրակամուտ համայնքի ավագանու 20.09.2019թ.-ի թիվ 27-Ա որոշումը և ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով , ,,Տեղական ինքնակառավարման մասին '' ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 16-րդ կետով և ելնելով ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին մասի 3-րդ կետի պահանջից և նկատի ունենալով ,որ ընդլայնվող հողամասը օտարվում է հասարակական կառուցապատման նպատակով և հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել հրապարակային սակարկությունների միջոցով,

Որոշում եմ

1.Շիրակամուտ համայնքի 06-087-0062-0011 ծածկագրի տակ գտնվող 255,2 քառ.մ հողամասը (մեկ քառ.մետրը 222 դրամ կադաստրային արժեքով) ուղղակի վաճառքով օտարել Գագիկ Կառլենի Նասլյանին:

2.Ուժը կորցրած ճանաչել Շիրակամուտ համայնքի ղեկավարի 19.04.2019թ. ,,Գ.Նասլյանին ուղղակի վաճառքով հողամաս օտարելու մասին'' թիվ 35-Ա որոշումը:

3. Գ.Նասլյանի հետ կնքել առք ու վաճառքի պայմանագիր:

4. Հանձնարարել գլխավոր մասնագետ Հ.Իգիթխանյանին՝ փոփոխություն կատարել համայնքի հողային փաստաթղթերում և հաշվեկշռում:

5.Սույն որոշման մասին տեղյակ պահել Գ.Նասլյանին:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

✉ Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզ, Շիրակամուտ համայնք

☎ 0255 6-15-01

ՈՐՈՇՈՒՄ

,,11" հոկտեմբերի 2019թվականի N 57-Ա

06-087-0012-0013 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԳՈՄԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՂԱՐՇԱԿ ՄԻՇԱՅԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Վաղարշակ Միշայի Եղիազարյանի դիմումը, 13.11.1997թ. գրանցված սեփականության վկայագիրը, 01.09.2005թ. թիվ 1211 ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրերը, հողամասի և շենք շինությունների համար կազմված հատակագծերը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված Կ-06082019-06-0067 որոշումը՝ ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ,,Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ,,Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին" ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ Հողային Օրենսգրքի 60-րդ և 64-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի 06-087-0012-0013 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.12363 հա մակերեսով հատկացված հողամասի և այդ հողամասի վրա գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումների իրականացված, հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի տան և գոմի նկատմամբ ճանաչել և վերականգնել Վաղարշակ Միշայի Եղիազարյանի /ծնված 20.01.1964թ./ սեփականության իրավունքը:

2.Վերը նշված գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:

3.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4.Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Շիրակամուտ համայնք 8-րդ փողոց, թիվ 48 /բնակելի տուն/:

5,Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 26.07.2019թ. թիվ 46-Ա որոշումը և որոշման հավելված հանդիսացող հատակագծերը:

6,Օժանդակ շինություն հանդիսացող գոմը կառուցված է եղել նկուղային հարկով, այն վերակառուցման երբևէ չի ենթարկվել և չի եղել մեկ հարկանի կառույց: Սխալը առաջացել է նկուղային հարկի չափագրումը չկատարելու արդյունքում:

7.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է պետական գրանցման::

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԵՐԱՆՈՍՅԱՆ